



ՀԱՅԲԱՐԱՆ

ԱՐԱՐԱԿԱՆ

ՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ԹԻԻ 186

15 ԱՊՐԻԼ 1915

ԿՐՕՆԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՏԵՂԵԿԱԳՐԱԿԱՆ

ՇԱՐԱԹԱԹԵՐԹ

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՊԱՏՐԻԱՐԿԱՐԱՆԻ

Անոնք որ կը փափաքին Արձագանգի պակաս թիւերը լրացնել, իւրաքանչիւր թիւի համար մէյմէկ դահեկան դրկելու են :

ԱԶԳԱՅԻՆ ՍԻՆՀՈՂՈՍ Կ. ՀԱՅՈՑ

Տպագրութիւնը աւարտած է և կը ծախուի	40 դահեկանի :
Գաւառներու համար փոսքայի ծախք	10 դահեկան :



ԿԱԹՈՂՈՍԷ ԱՐՁԱԳԱՆԳ

ԿՐՕՆԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՏԵՂԵԿԱԳՐԱԿԱՆ
ՇԱԲԱԹ-ԱԹ-ԵՐԹ

Հիմնդրորդ տարի 15 Ապրիլ 1915 թիւ 186

«Մերազան Բանաստեղծներն Պիոս Ժ. կը մտաբերէ որ Կաթողիկէ Արձագանգը շարաքաղերը շա-
ռեակէ Հայաստանի կաթողիկէ ժողովրդոց մէջ, մանաւանդ ի գաւառս, փրկարար առաքելութիւն մը կա-
տել, ի բարգաւաճման կրօնից եւ ի հոգեւոր օգուտ հոգիներու: Այս մտքովս արդիւնաւորութեան համար
Մերազան Հայրն սրտազին կ'օրհնէ յիշեալ Շարաքաղերը, ինչպէս նաեւ անոր խմբագիրներն եւ ընթերցողները»:

Նախկին Կաթող. Մէրի Տէլ Վալի, առ Ամեն. Տ. Պիոս Պետրոս Ժ. Թեղեան Հայ-Կաթողիկէ Պատրիարք Կիլիկիոյ
23 Նոյեմբերի 1912, ընդ 60780 քուտանարաւ:

ԴԵՊՐԵՐ ԵՒ ՍԿԶՐՈՒՆՔՆԵՐ

ԱՆՀԱՏԱԿԱՆ ՄՏՔԻ ՅՈՒՍԱԽԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Ուսկինց է որ այնքան չփութութիւն
կը տիրէ թէ՛ խորհելու և թէ՛ գործե-
լու մէջ. հնար չէ՝ ազգերու, ժողովրդոց,
ընտանիքներու և անհատներու ներշնչել
միօրինակ խորհելու և միօրինակ գոր-
ծելու սկզբունքներ և ուղղութիւն: Ար-
դեօք ճակատադրական ժառանգութիւն
մը նկատելու է՝ բարեխնական Խառնա-
կութիւնը, որ միշտ աւելի կը կնճռոտէ
մարդկային վերաբերումները մտքի եւ
կամքի հաղորդակցութեան մէջ:

Եթէ արդիւնքներէն միայն դատե-
լու ըլլանք՝ ներկայ դարու մարդկու-
թեան կայութիւնը այնքան աղետալի
դարձած է ընկերական անխտահու-
թեան տեսակէտով, որ ոչ միայն ազգ-
ազգէ, այլ նոյն իսկ ընկեր ընկերէ, եղ-
բայր եղբորմէ խզելու կը սպառնայ և
եթէ լաւ քննուելու ըլլայ՝ հիմնապէս
խզած է՝ հակառակ որ ամենէն աւելի
կը գոռացուին խլացնելու չափ՝ մարդա-
մերձութեան զղրդիչ բացատրութիւն-
ներ, հակառակ որ հեռաւորութեան վի-
հեր ու պատուարներ վերցուած են:

*

**

Ինչ է որ կ'արդիլէ միութիւնը
և յարակցելու տրամադրութիւնը. ան-

հասականութիւնը, որ հիմ կ'ուզուի բռնել թէ՛ մտքի թէ՛ կամքի գործելու կերպին: Այդ անհասականութիւնը ազատութեան հետ չփոթելով մարդիկ, կ'ուզեն անպատճառ կանոն առնելեաց ընել զայն ամէն բանի մէջ, և չեն անդրադառնար որ հին ամէնէն աւելի կ'իշխէ անհասականութիւնը, ուր կը պակսի բանականութիւն և հետեւաբար միտք ու կամք: Անասունները, որ ասուն չեն ճիշդ այն պատճառաւ որ բանական չլլալով չունին ընկերամերձ գործակցութեան պէտք, լոկ բնազդումով տարուելով անհատականութեան օրէնքի տակ կը մնան անզարգանալի. անոնցմէ աւելի անհասական է բոյսերու կեանքը, իսկ կեանքէ զուրկ իրաց դասակարգը այդ անհատական ինքնամիտփումի մէջ կաշկանդուած ըլլալով հազիւ նիւթական մերձագրութեան տրամագիծ է:

Ինչէն է որ անհասականութիւնը ամէն բանի օրէնք ու կանոն կը դրուի և աստուածացնելու չափ կը փառաբանուի. ահա պատճառը. կը մերժուի բացարձակը և ամէն բան համեմատական կը նկատուի. ուստի մտքին համար չկայ բացարձակ ճշմարտութիւն, կամքին համար չկայ բացարձակ բարութիւն, միտք ու կամք ազատ կը մնան իրենց անհատականութեան մէջ և հետեւաբար իրաւունք կ'ունենան ուրիշ կամքերու և մտքերու բախելու, իրաւունք կ'ունենան ստեղծելու իրենց համար ճշմարտութիւն և բարութիւն, հետեւաբար գիտութիւն, օրէնք, բարոյականութիւն, կրօնք՝ անհատական ըմբռնումէ դուրս իմաստ չունին, ուստի չեն կրնար անհատականութենէ անկախ

սկզբունքներ տալ, որոնցմով մարդիկ իրենցմէ դուրս ու վեր կեցող դրութեան հպատակին:

*
*

Ուրիշ ելք չէր կրնար ունենալ անհատական միտքը, որ ինքն իր ձեռքը մնացած էր. վասն զի մարդկային բանականութեան խուզարկութիւններուն մէջ յաճախ կը խառնուի սխալը և այս ճակատագրական հարկ մը նկատուած էր հեթանոսութեան մէջ որ *errare humanum est* ըսելով կը հանդարտէր ու կը համակերպէր նոյն իսկ ամենէն խայտառակ ու անճոռնի մտորութեանց առջեւ: Եւ ասոր համար հակառակ տալանդաւոր և հանճարեղ փիլիսոփաներու ճիգերուն, չէին կրնար անոնք ըսածնուն ապահով ըլլալ, եւ ոճի պերճութեան մէջ ցամաք է ըսածնին, հըմտութեան մէջ գեղեւուն է: Եւ եթէ երբեք ճշմարիտ բան մը կ'ըսեն կամ այն է որ բնութեան օրէնքը կ'իւրացնեն իբրեւ իրենց գիւտը, կամ մտքի բնածին ուղղութեան ազդեցութենէն չի խուսափիր ըսածնին, կամ ընդօրինակած են նոյն իսկ հրէական սուրբ գիրքական աւանդութենէ: Առ հասարակ սակայն այս կարգի ճշմարտութեանց ալ այնպէս հասած են հեթանոս մտքերը ինչպէս կոյր մը կորուսած առարկան ձեռք կը բերէ պատահաբար, եւ կամ զեկն ու ուղեցոյցը կորուսած նաւ մը փոթորկացած ալիքներու մղումովը ծովեզերք նետուած միջպին յանկարծ նաւահանգիստ մը կ'իյնայ: Միւս կողմէ, ինչպէս ոսկին արծաթն ու մետաղները քիչ թէ շատ կը գտնուին ցիրուցան՝ երկրի ամէն կողմը, այսպէս ճշմարտութեան բեկորներ

կրցած են անհատական խուզարկունե-
րու ձեռքը իյնալ:

* *

Անհատական կարծիքի, անհատա-
կան խուզարկութեան այս վտանգաւոր
կացութիւնը ամենամեծ միտքերն իսկ
յուսախաբ ըրած է. Կիկերոնի օրինակը
կրնայ բաւել ամենուն տեղ: Այս կո-
րովի միտքը, որ ճշմարտութիւնը գտնե-
լու փափաքին չափ աւելարկութիւն ու-
նէր, աչքէ անցուցած է ամէն փիլիսո-
փաներու գիրքեր եւ անկից վերջ գրած
է իր վիսիւմաններու վրայ, Տուսկուլեան
հարցեր, եւ Աստուածներու թնութեան
վրայ գիրքերը: Կարելի չէ չկարեկցիլ
այս զօրեղ մտքի խորխափումներու վրայ
և կարելի չէ չձանձրանալ այն շարու-
նակ անատուգութենէն, որուն մէջ կ'ուզէ
տարուբերել մարդուս միտքը: Զոհ նոյն
վարանումին՝ ինքն ալ կը վկայէ թէ չկայ
այրանդակութիւն մը զոր փիլիսոփայ
ըսած յղիւմ, և հետեւաբար, կ'ըսէ,
հարկ է ենթադրել որ փիլիսոփայու-
թեան պատճառը, այսինքն սկզբունքն է
անգիտութիւնը. causam idest princi-
pium philosophiæ esse inscientiam
(De nat, Deor. Lib. I): Այսքան տա-
րաձայն և այլանդակ կարծիքներու հե-
տեւանքը գործնականին մէջ ինչ կ'ըլ-
լայ. ո՛չ ակնածանք, ո՛չ սրբութիւն, ո՛չ
կրօնք կրնայ միալ. quorum si vera
sententia est, quae potest esse pie-
tas, quae sanctitas, quae religio? :
Վասն զի փիլիսոփաներու կարծիքները
դատողութիւններ չեն, այլ զառանցողի
երազներ, որոնք յետոյ բանաստեղծա-
կան ձեւի թափուած ըլլալով նոյն ինքն
չարագրութեան քաղցրութեամբը կը

զնասեն: Բայց վերջապէս կարծիքը
յայտնելու է, գէթ ըսելու է թէ ո՛ր
մէկը իրեն հաւանական կը թուի. ո՛չ
մէկը. Որքան երկար խորհիմ աշխատե-
աւելի մութ կ'երեւի կ'ըսէ. հետեւաբար
թողունք որ Աստուած մը գայ եւ որոշէ
թէ ո՛ր մէկն է ճշմարիտը Harum sen-
tentiarum quae vera sit, Deus aliquis
viderit (quaest. Tusc.): Խեղճ մարդ-
կային միտք, խեղճ անհատականու-
թիւն, ա՛յնքան աննեցուկ՝ ո՛րքան յանձ-
նապաստան. վասն զի Ս. Օգոստինոսի
բացատրութեան համաձայն ինքն իրեն
ապաւինած մարդը ինքն իր վրայ ինկող
բեռան կը նմանի:

* *

Անցեալը պէտք էր դաս մը ըլլար
մարդուն և Քրիստոսի գալստենէն և ա-
նոր երկնային վարդապետութեան բա-
ցարձակ ճշմարտութիւնը քարոզուելէն
ետքը պէտք չէր անհատականութիւնը
դառնար նախկին յուսախաբութեան խա-
ղալիկ ըլլալու: Դժբախտաբար Ագնոս-
տիկութիւնը քրիստոնէութեան առաջին
դարերու մէջ, Բողոքականութիւնը մի-
ջին դարու մէջ, գաղափարապաշտու-
թիւնը անցեալ դարու մէջ, այժմու ար-
դիապաշտութիւնը, որ ամէն նախկին
սխալներու հաւաքոյթն է, նոյն յուսա-
հատութեան մղեցին մարդը և կը ջա-
նան հոն թողուլ յուսախաբ: Անհատա-
կանութեան գերիշխանութիւնը ամէն
բանի վրայ, անհատական մտքի գերա-
կշռութիւնը ամէն խնդրոյ մէջ, անհա-
տական կամքի տիրողութիւնը ամէն
հաստատութեանց և ընկերական կազ-
մակերպութեանց մէջ, ահա՛ անձնապաշ-
տական մեծ ու միակ ձգտումը որ պատ-

ճառ է ամէն սխալներու և անիշխանա-
կան շարժումներու:

Ո՛վ կրնայ առջեւն առնուլ այս ա-
ղետալի վայրենկեցութեան դէպի մութը,
դէպի անստուգութիւնը, դէպի յուսա-
հատ խառնակութիւնը գաղափարներու: -
ա՛յն կրօնքը միայն՝ որ բացարձակի վրայ
հիմնուած է, որ ապահովութիւնը ունի
չմոլորելու, որուն հեղինակն է Այն որ ը-
սաւ. ես եմ ճանապարհ, եւ ճշմարտո-
թիւն եւ կեանք:

ՀՈՎՈՒԱԿԱՆ ԹՈՒՂԹՔ ՍՐՔՈՅՆ ՊՕՂՈՍԻ ԱՌԱՔՆՈՅ (*)

Բ. Հատակոտորական ենթադրութիւն

Երկրորդ դարու գնոստիկական աղանդա-
ւորներուն, անհետանալէն ի վեր, մինչեւ
իննեւտամներորդ դարու արշալոյսը, Պօղոս-
եան երեք Հովուական Թղթոց վաւերակա-
նութեանը դէմ բնաւ հակառակորդ մը երե-
ւան ելած չէր: Ասոր վրայ առաջին տնգամ
տարակոյս հանողը եղաւ Շմիդ (1804), ո-
րուն հետեւեցաւ Շլայքրմախըր (1807), յե-
տոյ՝ բաց յայտը, Պատը (1835): Ասոնք կա-
տարեւապէս չէին մերժեր այն թուղթերը,
այլ ըստ մասին միայն, ոմանք քիչ ոմանք
չառ. և կ'ենթադրէին թէ Բ. դարու մէջ
կերտուած են անոնք՝ Մարկիոնի և Վաղեն-
աինոսի մոլորութիւնները հերքելու համար:
Նորապոյնները կ'ըսեն թէ՝ այս թուղթերը յօ-
րինողները հիմ մը ունէին որ Առաքելոյն կը
պատկանէր. ա՛յլք յօրինեցին այն թուղթե-
րը, բայց Պօղոսի տոմասկներուն վրայէն:
Ի՞նչ էին այս տոմասկները, ըստ իրենց քմա-
ծին ենթադրութեան. իբրեւ թէ այդ տոմ-
ասկներու մէջ գրուած քանի մը խօսքերը
ուրպէս Պօղոս Առաքեալ գրուած թողած էր.
ասոնք առնելով մէկ մը յօրինած է այս թուղ-

թերը, կ'ըսէին, ասոնց վրայ աւելցնելով իր
խօսքերն ալ:

Որո՞նք էին ուրեմն Առաքելոյն բուն խօս-
քերը որ կը պարունակուին այս թղթոց մէջ:
Ահա հոս է ամէնէն էական կէտը, և ճիշդ
ասոր մէջ է որ այս բանապաշտ ենթադրող-
ներուն ստութիւնը կը յայտնուի: Բանի հաստ
որ են այս քննադատները, այնչափ ալ կար-
ծիք ունին, նոյն իսկ երբեմն միեւնոյն մար-
դը քանի մը կարծիք ունի. այսքան անիրա-
ւութիւն չէր կրնար ենթադրուիլ ճշմարտու-
թեան դէմ մաքառելու համար: Ուստի և ոչ
իսկ կ'արժէ ասոնց այս այլանդակ ենթա-
դրութեան հետ զբաղիլ, քանի որ իրար դի-
րար կը ջրեն. թո՛ղ իրարու հետ վիճաբու-
նին, գիտնալով թէ բնաւ չպիտի կարենան
համախոհ եղբակացութեան մը գալ, քանի
որ մտացածին և քմածին ենթադրութիւններ
որչափ հեռու են ճշմարտութիւնը ու Ս. Ե-
կեղեցւոյ հեղինակութիւնը տկարացնելէ,
նոյնչափ եւս իրարու մէջ դատապարտուած
են յաւիտենական անհամաձայնութեան:
Ուստի աւելի լուրջ կարծուող առարկութիւն-
ներով զբաղինք, որոնցմէ ոմանք բանասի-
րական են, այլք պատմական:

*
* *

Դ. Բանասիրական առարկութիւնք

Ամէնէն առաջ դիտել կը տրուի թէ՝ այս
հովուական թղթոց և Պօղոս Առաքելոյն միւս
թուղթերուն մէջ բաւերուած մեծ տարբերու-
թիւն մը կայ: Այսպէս, երեք Հովուական-
ներու մէջ զործածուած 297 բառերու վրայ,
կը հաշուուին 173՝ որոնք Նոր Կտակարանի
մէջ ուրիշ ոչ մէկ տեղ զործածուած են, և
130՝ որոնք չեն գտնուիր Պօղոսի միւս թղ-
թոց մէջ (ի բաց առեալ սակայն առ Եբրա-
յեցիս թուղթը): Ընդ ամէնը ուրեմն 303
բառեր զորոնք Ս. Պօղոս միայն այս երեք
թուղթերուն մէջ զործածած է: Նոյնպէս
դիտուած է որ Առաքելոյն նախասիրութիւն
առած ոճերէն շատերը զործածուած չեն հով-
ուականներուն մէջ:

Կը պատահասանք թէ՝ միեւնոյն բանը,
թէեւ նուազագոյն համեմատութեամբ, կը

(*) Տե՛ս ԹԷԼ 484, էջ 69:

սեփական նաև միւս թուղթերուն մէջ : Աստուծոյ ամէն մէկը իրեն յատուկ ոճաբանութիւնն ունի . ամէն մէկը կը բովանդակէ խումբ մը բառեր որ իրեն սեպական են, համեմատութեամբ միւս թուղթերուն . և ոչ մէկը ամբողջութեամբ չի պարունակեր Առաքելոյն սիրական բացատրութիւնները : Իսկ Հովուականներուն մէջ համեմատութեամբ աւելի մեծ ըլլալուն պատճառը կրնայ ըլլալ նախ այդ հովուականներուն նիւթը, որ Առաքելոյն միւս թղթոց նիւթէն բոլորովին տարբեր է : Նոյնպէս կրնայ ըսուիլ թէ հոս անկայ իր բնական մթնոլորտէն դուրս կը գտնուի . չի խօսիր այլեւս պարզ հաւատացեալներու, այլ հոգեւոր հովիւներուն և անոնց մատնաւոր պարտքերուն վրայ, այսինքն է՝ հոգեւոր վարչութեան, առաջնորդութեան ու դաստիարակութեան վրայ . նոյնպէս քրիստոնէական հասարակութեան մէջ մտնել սպառնացող մոլորութեանց, յայնժամու Եկեղեցին կազմող անձերու զանազան դասակարգերուն, նուիրապետութեան և անոր այլեւայլ աստիճաններուն յատուկ պաշտամանց վրայ . հետեւաբար Առաքելոյն ոճաբանութիւնը բնականաբար պէտք է տարբերի միւս նամակներուն մէջ գործածածէն :

Աւելցնենք նաև թէ՝ մատենագրի մը բառարանը ստէպ յոյժ փոփոխական է՝ փոփոխութեամբ ժամանակին, հասակին եւ այն պարագաներուն՝ որոնց մէջ նա կը խօսի : Ի վերջոյ, անոգում չըլլար զիտել ևս որ՝ եթէ Հովուականներուն 303 բացատրութիւնները միւս թղթոց մէջ կը պակսին, 897ի գումարին մէջ սակայն կը մնան 594, որոնք, չեն պակսիր և որոնց մէջ կը գտնուին բազմաթիւ ոճեր որոնք Առաքելոյն շատ սիրելի են, և կամ միայն իրմէն գործածուած Նոր Կտակարանի մէջ :

Նոյն ինքն Րէոյս, մեր հակառակորդը, կ'ըսէ . «Երբ մտածուի թէ ո՞րչափ քիչ էջեր ունինք Պօղոս Առաքելէն, քանի՜ տարիներու շարքին կը բաժնուին անոնք, քանի՜ այլեւայլ նիւթերու վրայ կը ճառուի անոնց մէջ, և ո՞րքան զրոյժը կը կրեն անոնք՝ ազատութեան, լրջմտութեան, և նոյն իսկ

հանճարի՝ լեզուի մը գործածութեան մէջ որ յինքեան սաստիկ հարուստ է, եւ զոր ան ասեն հարկ էր յարմարցնել գաղափարներու բոլորովին նոր մէկ դասաւորութեան, ասոնք բոլոր նկատի առնելով, զարմանալի պիտի ըլլար անշուշտ եթէ Պօղոսի թուղթերուն մէջ չգտնուէր այլազանութիւն, եթէ իր բառարանը չըլլար շատ հարուստ և ամէն նամակին համար յարմարագոյն նոր լառերով : Եթէ այդ առարկութիւնը — բառերու և ոճի տարբերութեան — կարող ըլլար ապացուցանելու հեղինակներու տարբերութիւնը, Պօղոսի թուղթերէն չէին մնար և ոչ երկու հատ՝ զորոնք հարկ չըլլար այլեւայլ հեղինակներու վերադրել : »

Բառարանին հետ ի միասին կ'առարկեն մեզ նաև տարբերութիւնը ոճոյ (style), որ թէև Հովուականներու մէջ մաքուր է և սահուն, սակայն քիչ մը միօրինակ է, ծանր, անկենդան, մինչ Պօղոսի ոճն առ հասարակ վաւերուն է, ընդոտ և կնճռեալ, ջղուտ և լի կենդանութեամբ :

Այս տարբերութիւնները իրաւ է որ ստոյգ են, սակայն եթէ միեւնոյն մատենագրի բառարանը կրնայ փոխուիլ՝ փոփոխութեամբ նիւթոյ, պարագայից, ժամանակի եւ անձի, և նաև հասակին յառաջանալովը, այս բանը մասնաւորապէս ճշմարիտ է երբ խնդիրը ոճի վրայ է : Պօղոս, որ մտերմօրէն անձնական եւ՝ այսպէս ըսելու համար, վերապահեալ նամակ մը կը դրէ իր սիրելի աշակերտին՝ Տրիմթէոսի, կամ միւսին՝ Տրոտի, անոնց տալու համար խորհուրդ, ցուցնելու համար այն ուղղութիւնը որուն պէտք է հետեւին իրենց պաշտաման մէջ, չի կրնար բնականաբար տոնուլ ձեւը հրապարակական նամակի մը, զոր կ'ուզէ ամբողջ հառարակութեան մը, եկեղեցւոյ մը, գաւառի մը, եւ որուն մէջ պէտք էր իրեն՝ ճառել առաւուածաբանական խնդիրներու վրայ, զորոնք քրիստոնէութեան յանկարծական երևումը դրած էր մարդկային մտքի ու խզճի առջև, պէտք էր յորդորել վճռուած խնդիրներ, կարգադրել անհամաձայնութիւններ, ակարները յորդորել, թմրածները ոթափել, եւ երբ

բեմն զօրաւոր հարուածներ տալ՝ հրապարակական գայթակղութեանց դէմ զոր մոլորեալ քրիստոնեաներ կու տային: Հնա՛ր էր մի՛թէ միեւնոյն ձեւը պահել նաև այն նամակներուն մէջ զորոնք կը գրէր իր երիտասարդ բարեկամներուն, մանաւանդ այնպիսի ժամանակի մը մէջ որ նա երկայն ու խիստ աշխատութիւններէ խոնջած ու պարտասեալ, կը զգար թէ կը կքի տարիներու բեռան տակ և կը մտածէր իր աշխատութեան ծանր ժառանգութիւնը անոնց թողուլ:

Արդ, հակառակ այս ամէնուն, դեռ այս թուղթերու մէջ ու կ'երեւի Պօղոսի գրոյմն ու գրելու կերպը. հոն կը գտնուին իր միջանկեալները, իր թուումն մասանցը, իր առածները, անուշագիր ու երբայամու ոճը: սովորական մէջերունները, ողջոյնի ձեւերը. այնպէս որ Հովուականներու վաւերականութեան հակառակորդներն անգամ, ինչպէս է Ծուրխէր, ստիպուեցան խոստովանելու թէ՛ անոնց հեղինակը յիշաւի քաջ քաջ ծանօթ էր անպատճառ Պօղոսի ոճաբանութեան, քանի որ այնքան լաւ կերպով կրցեր է անոնց նմանիլ. խոստովանութիւն մը, որ ճշմարտութիւնը ընդունելու չափ կ'արժէ:

ԻՄԱՍՏՈՒԹԵԱՆ ՍԿԶԲԱՆՑ ՎՐԱՅ

ԲԱՐՈՅԱԿԱՆ ԵՒ ՊԱՏԱՄԿԱՆ

ԽՈՐՀՐԴԱՅ ՈՒԹԻԻՆՆԵՐ (*)

Բ.

«Բարի հայր, բարի ամուսին բարի սէր, առանց սկառութեան»:

«Պատեցէ՛ք ձեր ծնողքը, մանաւանդ իրենց ծերութեան ժամանակ»:

(Շար.)

Վերջապէս, յետին խորհուրդը, զոր քեզի կու տանք, և զոր իմաստունը կը յանձնարարէ, է որ, չըլլայ թէ երբեք յանձն առնուա առաջնորդուիլ անոնցմէ, որոնց պէտք է որ դուն առաջնորդես: Բու ունեցած իշխանութիւնդ և ընչիցդ ազատ արամադրութիւնը միշտ լաւ պահպանես, որպէս զի փոխանակ քու յուսացած ուրիշանքդ ու հան-

գիստդ վայելելու, արհամարհանաց մէջ չիլնաս, և չար եւ ապերախտ չընես զանոնք, զորոնք կը կարծես թէ քու առատածեմութիւնդ աւելի հոգածու և երախտապարտ պիտի ընէ: Մինչդեռ վերոյ ես եւ շնչես, կըսէ իմաստունը, ոչ փոխոխեցի գեղգեղանայն մտեղի: Զի յաւազոյն ե քեզ՝ գի որդիք քո գեղգեղանայն, քան զու հայեցիս ի ձեռս որդւոց քոց (Եղեատ. Գ. 22): Անոնք քու բարութեանդ կ'ախում ունենան, և ոչ երբեք դուն անոնց արդարութենէն: Կարի գործաւորի հօր մը վաղվաղուկ բարերարութիւնները, իր զաւակաց սրտերը անոր առջեւ կը փակեն. և այդ բարերարութեանց վախճանը սովորաբար անոնց երախտագիտութեան ու սիրոյն ալ վախճանն է: Երբ իր ձեռքերը այլեւս պարապ են, իր ղէմքը անոնց ատելի կը դառնայ: Ասոր փորձն ըրաւ հարուստ վաճառական մը: Ասիկայ մէկ հատիկ աղջիկ զաւակ մը ունէր, զոր պատուական ընտանիքէ երիտասարդի մը հարսնացուց, և իր բոլոր ունեցածները անոնց պարգեւեց: Շուտով հասկըցաւ թէ ի՛նչ մեծ պիտի գործած էր, յօժարակամ հրաժարելով իր ամէն ունեցածէն ի նպաստ աղջկան մը և փեսայի մը, որոնք իր անձին համար այլեւս արհամարհանքէ դուրս ուրիշ բան մը չունէին, որոնք իրեն հետ դաժանութեամբ կը խօսէին, և ի լրումն աղետից այդ թշուառ մարդուն, իրեն՝ ամէնէն կարեւոր եղած բաները կը զլանային: Այսպիսի տխուր պայմաններու մէջ, թշուառ ծերունին անխոհեմութեամբ ինքնիրեն ըրած չարեաց մէջէն ելնելու համար հնարք մը մտածեց: Գնաց իր մէկ հաւատարիմ բարեկամը գտաւ, և իր նեղութեանց պատճառը անոր յայտնեց, և անոր ըսաւ որ ինք կրնար այդ նեղութիւններէն զինքը ազատել, եթէ ուզէր, երկու օրուան համար միայն իրեն կարեւոր գումար մը փոխ տալով: Բարեկամ մը հաճութեամբ անոր խնդիրքը կատարեց ինդրած գումարը անոր փոխ տալով: Ծերունին այդ գումարը առնելով եկաւ իր սենեակը մտաւ և դրամները շառաչմամբ սեղանին վրայ պարպեց. անոնց յաճախակի և սաստիկ հնչիւնը լսեցին աղջիկն ու փեսան, ու

(*) Տես թիւ 177, էջ 795:

րոնք վազեցին եկան, և ծերունիին քով այդպիսի կարեւոր գումար մը տեսնելով, ապա չեցան մնացին: Ապա երբ ասոնք քաշուեցան, ծերունին շատ մը փոքրիկ քաակնորու մէջ գայլախաղ քարեր լեցնելով, արկղի մը մէջ զետեղեց և փոխ առած զբաժն ալ տարաւ իր բարեկամին յանձնեց:

Սակայն տան մէջ իրեն նկատմամբ ամէն բան փոխուեցաւ: Աղջիկը և փեսան սկսան իր մասին արտաքոյ կարգի խնամք մը ցոյց տալ: Իր բազմապատ ամէն բանը առատապէս անոր հայթայթել և ամէն բանի մէջ կանխել անոր փափաքները կատարելու, վախճալով որ մի գուցէ իրենց շահուց հակառակ կտակ մը ընէ և կամ չմտնէ այն գումարը, զոր կը կարծէին թէ արկղի մը մէջ պահած էր: Կենաց պայմաններուն այս փոփոխութիւնը և այս նոր խնամածու ուշադրութիւնները ծերունիին մտնէր թիւ մը ուշացուցին: Բայց այդ վերջապէս եկաւ հասաւ և մեծ հանգէտով անոր յուզողականութիւնը կատարեցին: Ընթացողներուն կը թողունք երեւակայիչ այդ երկու ամուսնորու յուսախաբութիւնը և միանգամայն կատարութիւնը, որոնք արկղը բանալով, գայլախաղ քարերէն զատ ուրիշ բան չգտան անոր մէջ, եթէ ոչ թուղթ մը, որուն վրայ հետեւեալ խօսքերը գրուած էին. «Բաւեր» ֆարկոնելու հաւատ գանձնի որոնք իրենց մահին առաջ խենց ստացուածները ուրիշներու կը տան:

Թարգմ. Ն. Ծ. Վ. ԱՃԷՄԵԱՆ

(Շարունակելի)

ՅԱՐՄԱՍՏՈՒԹԻՒՆԸ (*)

Դ Լ ՈՒ Ն Բ.

Յօդ. 7. Ուսուցիչներ եւ կաթողիկէ վարժարաններ

31. Կաթողիկէ վարչականք, փաղտկանք և հոգաբարձութիւն, որոնք ըստ օրինաց և վարժարանի կանոնաց՝ եկեղեցական իշխանութեան հետ համաձայնած՝ խղճմանքն

կ'աջակցին դաստիարակչական այս մեծ և կարեւոր գործին, ամենամեծ զգուշութիւն ընելու են դասատուաց եւ տեսուչներու ընտրութեանց մէջ, եւ ընտրելու են միշտ ուղղափառ հաւատքով, բարի վարքով և կարեւոր գիտութեամբ ճոխացեալ անձեր, որոնց կարենան վստահաբար յանձնել մանկըւոյն կրթութիւնն ու դաստիարակութիւնը եկեղեցական իշխանութեան հսկողութեան ներքեւ: Եւ ինչ որ ոչ պիտի մատնեն անուայ, անգութ ձեռքերու եւ սրտերու մատաղիստ մանկտին, այնպէս ինչպէս պիտի յանձնուէր անգէտ և անվարժ պարտիզպանի մը նորածին բուրաստանը, որ փոխանակ խնամքով պճնազորդուելու՝ վաղաթառամ պիտի կորցանար եւ փճանար անտարակոյս:

32. Վերոյիշեալ կերպով խնամուած դպրոցի մը սրբիւնքը կրնայ հասկցուիլ. իսկ ո՛րքան կը ճմլի մեր սիրտը երբ կը տեսնենք այնքան ջանքեր, ոտակներ, յոյսեր, ակնկալութիւններ փճացած, ոչ միայն այլոքաւան, հապա նոյն իսկ մեր կաթողիկէ վարժարաններուն մէջ, մանաւանդ ներկայիս: Ապացոյցներու առատութիւն կայ, նուազութիւն չկայ դժբախտաբար: Եւ այս ամէնը յառաջդիմութեան, զարգացման, ինքնապիտակցութեան, գիտութեան, լուսաւորութեան կրօնի կաշկանդումէն ազատագրութեան զոյնեցումով չպարուած...:

33. Կաթողիկէացի վսեմ գաղտփարներու, վեհ հոգատարութեանց առարկայ ըլլալու են նաեւ հրահանգիչ տիւումբներ, օգտաշատ պատշաճ եղբայրակցութիւններ, չինիչ ընթերցող տուններ, որոնց միջոցաւ կարելի ըլլայ պաշտպանել երիտասարդները սովականիչ միջնորդներէ և ապահովել անոնց արատաւքեր ապագայ մը: Ո՛հ, ո՛րքան վտանգաւոր են այն խեղճ երիտասարդները, որոնք բարձր և բարեկալ ըլլալով հանդերձ, բարձրագոյն ուսմանց ուսուցման պատճառաւ կը յաճախեն անկանոն կամ անկրօն գրպայներ, ճեմարաններ, համարժարաններ թէ՛ մեր եւ թէ՛ մանաւանդ օտար երկիրներու մէջ, և այդպէս յաճախ կը տեսնենք բոցնռանքն պատանիներ, որոնք մեծաւեճաւ քաղաքային և յան-

(*) Տե՛ս ԹԻՒ 174, էջ 745:

զըղնաբար վճիռներ կ'արձակեն մինչեւ իսկ չուսած, չճանչցած և չհասկցած բաներնուն վրայ. ինչո՞ւ համար. անոր համար որ իրենց անտարբեր կամ անկրօն դաստիարակները, ամպարիշտ դրքերը այնպէս սորվեցուցին, և իրենք կուրթօրէն եւ անասնաբար մտիկ ըրին սորվեցան եւ կը հնազանդին, առանց խորհրդածելու, առանց ուսածնուն հակառակն ալ ուսումնասիրելու:

Իրօք ալ այսպէս է. առ հասարակ կրօնքի եւ Աստուծոյ, Սկիզբեւոյ եւ նուիրապետութեան եւ սրբազան իրաց վրայօք խօսած եւ հակառակած ատեննին այնպիսի խոր տգիտութիւն մը ցոյց կու տան որ, մարդ չի կրնար իր ծիծաղն աւ. միանգամայն զայրոյթն ու կարեկցութիւնը զայել. քանզի Աստուծոյ հակառակ կը խօսին, զայն կ'ուրանան առանց ճանչնալու թէ ո՞վ է Ան, առանց ուսած ըլլալու Անոր յատկութիւնները եւ ճշմարտութիւնները: Կը բամբասեն Սկիզբին ու եկեղեցականները, առանց գիտնալու թէ ի՞նչ է Սկիզբին եւ անոր սորվեցուցածն ու անոր պաշտօնէից հանգամանքները. կը ծիծաղին սուրբ Ռորհուրդներուն վրայ եւ աւելորդ կը համարին սուրբ արարողութիւնները, առանց գիտնալու թէ ի՞նչ են եւ քանի՜ են Ս. Ռորհուրդները, եւ ի՞նչ կը նշանակեն այն սրբազան խորհրդաւոր արարողութիւնները:

Որքան ծիծաղելի պիտի երեւար մէկը երբ բարոյովին անգիտակ կամ կիսկատար ուսմամբ ուզէր քննադատել Բօսսինիի, Պէթօվէնի, Վէրսիի եւն. երաժշտական հրաշակերտները, մինչեւ իսկ երաժշտական նախատարերքը չէնքով շնորհքով չուսած: Այսպէս ըսէք ուրիշ գիտութեանց, մանաւանդ գիտութիւններու գիտութեանց մասին՝ որ է աստուածգիտութիւնը: Այնպիսիներուն կ'ուղղենք Ապեղէսի պատգամը որ կը գոռայ. կօշիկեմ վեր մ'եղլեր: Եւ շատ բնական է որ այս տխուր եզրակացութեան յանգի այն դաստիարակութիւն եւ գիտութիւնը, որ իրեն հիմ չի դնել Աստուծոյ երկիւղը, եւ միշտ կ'ուսանի ու չի հասնիր գիտութեան նաւահանգիստը: Սկիզբն իմաստութեան երկիւղ

Տեառն. եւ այս երկիւղը չունեցող գիտութիւնը՝ կը հպարտացնէ ու ծիծաղելի կ'ընէ գիմարդ:

(Շառնեակելի)

ԱՅԼ ԵՒ ԱՅԼ Ք

ԱՐԵՒՆ ՈՒ ԱՐԻԻՆԸ. — Ամէն մարդ գիտէ որ եթէ տունկերը անօդ և անլոյս տեղ մը փոխադրուին, գունաթափ կ'ըլլան, կը թռամին և շատ անգամ ալ կը չորնան: Արդ մենք ալ, որ մեր բուսական կեանքին մէջ, տունկին հիմնական օրէնքներուն տակ կը գըտնուինք, արեւուն չգոյութենէն, միեւնոյն վնասակար հետեւանքներուն կ'ենթարկուինք: Ահա այս պատճառաւ քաղաքացիները որ աղէկ կ'ուտեն և կեանքի ամէն դիւրութիւնները կը վայելեն, տկար են. իսկ գիւղացիները հակառակ իրենց նուազ անդառուութեան, հակառակ մշակութեան ծանր և խիստ աշխատանքներուն, ստոյգ են և ուժեղ: Արեւը մեր կեանքին պահպանութեան և առողջութեան ամենամեծ ազդակն է: Ամէնքը գիտեն թէ արեւը կը բաղկանայ շիճուկ ըսուած հեղուկ հիւթէ մը, որուն մէջ կը լողան անթիւ անհամար կարմիր և սպիտակ գնդակներ: Եթէ արեւը և օդը լակսին, կարմիր գնդակները դժուարաւ և նուազ թուով կը կազմուին, և անհատը անարիւնութեան ախտով կը վարակուի: Միւս կողմէ սպիտակ գնդակները որ անարիւնին մէջ շատ առատ են, բնաւ օգուտ չեն բեր գործարաններուն, որովհետեւ ոյժ չունին և չեն կրնար կռուիլ կազմածներու մէջ սպըղած վնասակար մանրէներուն դէմ:

Անարիւն մարդը, տարօրինակ բնութիւն մը ունի. թոյլ է, զայրացկոտ է, ստէպ գըլխու ցաւ կ'ունենայ, ամէն ոչինչ բանէ դող կ'ելլէ, ամէն ինչ իրեն տաղտուկ ու տգոհութիւն կ'առթէ: Այսպէս արեւու պակասութիւնը կ'ազդէ ոչ միայն մեր բուսական կեանքին վրայ այլ նաեւ մեր բարոյական և մտաւորական կեանքին վրայ:

Ուստի աշխատինք արեւու և, որչափ կարելի է, բաց օդի մէջ ապրելու. հոգ տանինք որ օդը յորդութեամբ մտնէ մեր բնակարանը. Ով որ այս բանին միտ չի դնէր, ով որ իր սենեկին մէջ փակուած կը մնայ և օդէն վախնալով չափէն աւելի լաթերով կը փաթթուի, ամէն մարդէ աւելի ենթակայ է ամէն տեսակ հիւանդութեանց:

Արդի բժշկութիւնը արեւուն ազդեցութեան մեծ արժէք կու տայ և անով շատ մը հիւանդութիւններ կը լուծէ. Յատկապէս հիւանդ սղոց համար պատրաստուած դարմանարաններ կան, ուր կը ջնացուի զանոնք առողջացնել, մի միայն մերկ մերկ դաշտին մէջ քայլեցնելով կամ խիտացած կողմերին արեւը դնելով. Նոյն իսկ մի քանի ներքին անբուժելի հիւանդութեանց դարմանումին համար, իբրեւ վերջին միջոց, արեւը կը դնեն մարմնոյն վարակուած մասը. որովհետեւ արեւը, կրակի պէս, ամէն բան կը մաքրէ:

ՆԻՐՈՊԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐՆԵՐ. — Իտալացիին ամէն աստի, ամէն բանի մէջ արհեստաւոր մըն է. լաւ կը խօսի, լաւ կը գործէ և լաւ կը շարժի. Ոչ հպարտ է, ոչ խոնարհ է. քիչ մը արհամարհոտ է, զուարթ, զգայուն. կեանքի պատահարներուն մասին անհոգ. Տակուին բան մը կը պահէ Յօյներուն ողիմպական հանգարտութենէն, որով մանր մունր բաները իրեն վրայ չեն ազդեր. ծանրակշիռ բաներն ալ զինք չեն ընկճեր. Իր նկարագիրն է գեղեցկագիտական լրջութիւն:

Յրանաացիին աշխոյժով և լարուած կը խորհի, կը խօսի և կը գործէ. Ուրախ է. խանդավառ, զուարթ. ընկերութիւնը շատ կը սիրէ՝ փայլիլ կարենալու համար: Միշտ կազմ և պատրաստ է խօսակցութեան մէջ ընտիր, նուրբ իմաստով, ցայտուն խօսք մը նետելու, ամէնուն ուշադրութիւնը գրաւելու համար. Իր նկարագիրն է քիչ մը ինքնահաճ, թեթեւօղիկ զուարթութիւն և փառասիրութիւն:

Գերմանացիին հանդարտ է, տոկուն, անխոնջ, լուրջ, ծանր. կը շարժի ա-

ռանց աշխոյժի և առանց պերճանքի. Քիչ անդամ և քիչ կը խօսի, և շատ կը խորհի. կը գննէ ըստ բաւականի արտաքին աշխարհը. բայց աւելի ևս ներքին աշխարհը, որովհետեւ կ'ուզէ տեղեկանալ անոր ամենածածուկ խորշերուն և զայն աւելի բարւոքել. Ինքնիրեն սկզբունք մը կազմելէ առաջ շատ կը մտածէ, բայց յետոյ դժուարաւ կը փոխէ զայն. Իր ամբողջ կեանքը ասոր շուրջը կը դառնայ: Իր արտաքին ձեւերը մտքին մէջ անցնող դարձող մտածումներուն արտայայտութիւններն են:

Անգլիացիին տոկուն է, աշխատասէր, Գերմանացիին պէս կորովի, բայց արհամարհոտ. Ինքզինքը գերագոյն մարդ մը կը համարի, և անմիջապէս կը հասկնէ զայս, իր կրթութեան համեմատ, անճահօրէն, հեգնութեամբ, ժպիտով, կարեկցութեամբ. կը ջանայ ծածկել թաքուն խնամքով այն սեփական սկարութիւնները, զորոնք ուրիշներու պէս ինքն ալ ունի. Իր նկարագիրն է արհամարհոտութիւն և կորով:

Սպանիացիին արեւելեան խալապի մըն է. Լուրջ է, բայց աւելի թոյլ, աւելի անհոգ ամէն բանի և ամէն մարդու նկատմամբ. Առանց մասին փոյթ չ'ընէր ոչ թէ հպարտութենէն, այլ անհանգիստ չըլլալու համար. Ինքն իրմէ զոն ըլլալով ինքզինքը չի յոգնեցնէր. քիչով կը շատանայ. Ամէն բանէ աւելի հանգստութիւնն ու հաճոյքը կը սիրէ. Իր նկարագիրն է հանդարտ և հաճոյախնդիր մեծամտութիւն:

Ռուսը հպարտ է, յանդուգն, պարզ. Տակաւին ապատ, թափառաշրջիկ, նա հապետական կեանքը կը սիրէ. Ստէպ յանձն կ'առնու ծանր աշխատանքներ՝ քիչով շատանալով. բայց երբ ըմբոստանայ, կը յամառի ըմբոստութեան մէջ, վտանգը կ'արհամարհէ. սոսկալի է իր ատելութիւնը, եւրոպական քաղաքակրթութիւնը դեռ ևս բոլորովին փոխած չէ զինքը. կրօնասէր է, աւելորդապաշտ: Իր նկարագիրն է պարզ և քիչ մը բիրտ ուժ:

ՔԱՀԱՆԱՅԻՆ ԱՌՋԵԻ. — Թշուառակա՛ն,

որ կը հնծես մեղքերուդ զփնդակ ծանրութեան սակ, մօտեցի՛ր և վա՛րառ բեռդ: Մի՛ վախնար, խորշում չպիտի պատճառես այն անծանօթին, այն անանունին, որուն գաղտնիքդ պիտի պիտի յայտնես: Բու գաղտնիքդ պահելու համար անոր շրթունքները փակուած են խորհրդական կնիքով: Այն որ այդ խցիկին մէջ նստած քեզի կ'ունկնդրէ, քու երեսդ իսկ չի նշմարեր, քու շիկնելդ պիտի չտեսնէ: Խօսէ՛, Խոստովանէ՛ իրեն բոլոր խայտառակութիւններդ: Անիկայ հայրական ներդաժողութեամբ միայն պիտի պատասխանէ քեզի, մի միայն ողորմութեան և ներութեան վրայ պիտի խօսի քեզի... Յետոյ ձեռքը դէպի ճակատդ պիտի վերցնէ. մի քանի խօսք պիտի արտասանէ, և դուն պիտի հեռանաս մխիթարուած, արձակուած, հողիդ հրեշտակի թիւեր առածի պէս պիտի թեթեւնայ...

Ե՛ղբայր, ես ալ երկար ատեն քեզի պէս խեղճ, անհանգիստ մեղաւոր մը եղած եմ: Անշուշտ ե՛ս ալ քեզի պէս մեծ մեղաւոր մը չէի: Բայց Թովէֆ սը Մէսդը իրաւունք ունի, նոյն իսկ պարկեշտ մարդու մը խեղճը զարշելի բան մըն է: Ուստի քեզի պէս շատ ուղորմելի էի, և բնազդօրէն, կը փնտռէի գութով գործով զեղուն մտերիմ մը: Զանիկայ դոստ, Ինծի պէս ըրէ՛, Նորէն Աւետարանդ բա՛ց եւ խաչին զարձի՛ր: Մէկզի թողով հպարտութիւնդ՝ ներկայացի՛ր Յիսուսէն հաստատուած ատենին առջեւ, ուր կը գտնուի ողորմութիւն մը, որ արդարութեան ամենէն վսեմ երազներէն անգամ գերիվերոյ է: Խոստովանաբանին մէջ քեզի սպասող Աստուծոյ պաշտօնեան հոգւոյդ աղատերը լուսաւու համար քեզմէ մի միայն քանի մը կաթիլ արցունք կ'ուզէ. որովհետեւ իր իշխանութիւնը առած է անհուն բարութեան Տիրոջմէն որ Գողգոթայի վրայ զղջացող աւազակին թողութիւն կու տար և անոր առջեւ կը բանար Դրախտին և յաւիտենական կեանքին շքեղ պողոտան:

ԱՆՈՆՔ ՈՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԴԵՄ ԼՈՒՏԱՆՔ ԿԸ ԺԱՅԹՔԵՆ.—Որո՞նք արդեօք կը պախա-

րակեն կրօնքը իբրեւ շատ տաղտկալի բան մը:— Անոնք որ զայն չեն գործադրեր:

Որո՞նք կը մեղադրեն Եկեղեցին՝ իր յայտնեալ վարդապետութեանց նկատմամբ հաւատք պահանջելուն համար:— Անոնք որ հաւատք կ'ընծայեն ամենավատթար տխմարութեանց, ամենէն անհեղեղ մոտաւարտութեանց:

Որո՞նք եկեղեցին իբրեւ մարդը ստորնացող կ'ամբաստանեն:— Անոնք որ կը պնդեն թէ կապին է իրենց հայրը... զիպուածը՝ իրենց տէրը... հաճոյքը՝ իրենց կանոնը... ոչնչութիւնը՝ իրենց վախճանը:

Որո՞նք կ'ամբաստանեն Եկեղեցին իբրեւ դրամի կրօնք մը:— Անոնք որ զայն կը կողոպտեն ամենէն անամօթ լրբութեամբ:

Որո՞նք կ'ամբաստանեն Եկեղեցին իբրեւ անհերոզ:— Անոնք որ չեն հանդուրժեր բնաւ որ մէկը իրենցմէ տարբեր կերպով մտածէ:

Որո՞նք կ'ամբաստանեն Եկեղեցին իբրեւ լոյսի թշնամի:— Անոնք որ ոտնակոխ ընելով ազատութիւնը կաթողիկէ դպրոցները փակեցին, կրօնաւորներն ու ուսուցիչները վտարեցին:

Որո՞նք կ'ամբաստանեն Եկեղեցին իբրեւ թշնամի ժողովուրդին:— Անոնք որ պատմութեան անաղիւսակ են և կը հալածեն կրօնքի կողմէ հաստատուած հիմնարկութիւնները (անկեղանոց, մանկանոց, դորժանոց ևն. ևն.):

Որո՞նք ուրեմն ամենէն աւելի յանգոյսօրէն լուսանք կը ժայթքեն Եկեղեցւոյ ուսանոր վարդապետութեանց գէմ:— Անոնք որ կրօնքին բնաւ լուր չունին, կամ անոր վարդապետութիւններէն սոսկում կը զգան...

Չվախնանք ուրեմն մեր վրայ յարձակող ներուն ո՛չ թիւէն, ո՛չ կատաղութենէն. մահաւանդ թէ կերպով մը ուրախանանք: Գիտեն ըրածնին, զիտեն թէ մենք «ոյժ մը» ենք. Ձեռն կրնար ո՛չ արհամարհել զմեզ, ո՛չ անարգել և ո՛չ ալ անառ ընել. և անա այս է իրենց մոլեգնութեան բուն պատճառը:

Մենք ա՛ն և պատկառանք կ'աղբենք անոնց՝ մեր թիւովը, մեր վարդապետութիւններովը, մեր գաղափարներովը, որ ամէն օր կը բարգաւաճին, անդիմադրելիօրէն կը ծաւա-

լին, մեր վստահութեամբ և մեր յոյսերով :
Մենք վախնալու ենք անոնց ոչ թէ զայ-
րոյթէն այլ անսարքերութենէն :

Եկեղեցին, որ ծնաւ հալածանքով, մեծ-
ցաւ հերետիկոսութեանց մէջ, ամրացաւ պայ-
քարներով, երբ այլ եւս հակառակորդներ
չունենայ, ա՛յն ատեն յոյսերնիս կտրելու ենք
իր հիմնադրին խոստումներէն :

Բայց ան պիտի ապրի որչափ տեւէ պայ-
քարը :

ԿԱՐԴԻՆԱԼ ՆԻՒՄԸՆ

ԳԵՐՈՆՏԻՈՍԻ ԵՐԱՁԸ

Դ .

ՀՈԳԻՆ

Ահ, մոլեգին և խառնաշփոթ աղաղակ մը
կը լսեմ, որ զիս պիտի վախցնէր եթէ
Կրթեք վախնալու ընդունակութիւն ունե-
նայի :

ՀՐԵՇՏԱԿԸ

Դատաստանին գաւիթը հասած ենք . այս
կաղկանձիւնը հոն հաւաքուող դեւերէն կու
գայ : Ասոնք այն կէս-լէգէտնին կը վերա-
բերին, ուր ատենով Սասանը երեւցաւ : Աս-
տուծոյ որդիներուն մէջ, Յոր Արդարը ան-
գունեւու համար : Արդ իր լէգէտները հոս
սովասանջ կը վխտան և կը պահանջեն ինչ
որ իրենց կը վերաբերի, և դժոխքին համար
հողիներ կը ժողվեն : Ականջ գիր իրենց պո-
ռոցներուն :

ՀՈԳԻՆ

Ի՜նչ սուր ճիչեր : Ի՜նչ խառնաձայնու-
թիւն :

ԴԵԻԵՐԸ

Վա՛տ ու կոպիտ
Երկրածիններ,
Աստուած ըլլալ
կը փափաքին,
Նոր ծընունդով,
Նոր շնորհքով, յորդ

Արդիւնքներով .
Իբրեւ թէ այս
Ամէնուն հնար
է բռնել տեղն
Բարձր մաքին
Հուր ակնարկին
Մե՛ծ, ոգեղէն
Էականերուն,
Սուրբ ուժերուն,
Խրոխտ յարկին, լո՛յս
Արքայութեան
Օրինաւոր
Եւ առաջին
Ժառանգներուն,
Որ զրկուեցան,
Թաւազըլոր
Տապալուեցան,
Լոկ բիրտ կամքով
Եւ բարկացայտ
Ակնարկով մի
Բռնաւորի :
Այս բռնաւորն
Միշտ անիրաւ,
Միշտ յաղթական,
Անոնց գունդերն
Արաաքսելէ
Յետոյ, արեւաւ
Անոնց թաղերն
Սաղմոս երգող,
Աղօթք հծծող,
Դող, աւաղով
Գերիներու,
Իր ոտքերուն
Փռչին լղելու
Կազմ-և պատրաստ
Սարուկներու :

ՀՐԵՇՏԱԿԸ

Անոնց խռովիալ և ողեսողաւ էութիւնն
է որ այսպէս կ'արտայայտուի . անոնք կը
նմանին գրաստներու որ կեանքերնին կ'ան-
գընեն իրենց վանդակին խաղխումներուն եւ
տին ահեղօրէն մռնչելով և շրջաշրջելով :

ԴԵԻԵՐԸ

Մեզի կ'ըսեն
Որ միաքն ազատ

Եւ ինքնիշխան,
Զգաւելու չէ
Վեր ելլելու :
Սուրբն ինչ բան է .
Մէկ մ'որ չմոռած՝
Օգն իր շունչով
Կ'ապականէ .
Որուն ոսկրերն
Կը սրւշաւըին
Մահէն յետոյ :
Ահ , ահ . . .
Միսին մէջ իսկ
Աս ոսկրներն
Կ'ապականին
Գէշ կը հոտին :
Սուրբէն ներսում
Կը խնդրենք մենք :
Մարմին չունի .
Ահ , ահ .
Ան մեռած է .
Ինք զայն խաչեց
Կրկին կրկին ,
Միշտ ամէն օր .
Ահ , ահ .
Այս կաւը սուրբ ,
Ահ , ահ ,
— Քահանաներն
Այսպէս կ'ըսեն —
Դատաւորին
Առջեւ կ'ելլէ
Ներում կ'առնու ,
Ատելութեան
Եւ չարութեան
Ու նախանձի
Յանցանքներուն
Արիւնքոռչտ
Տենչերուն իսկ :

ՀՈԳԻՆ

Ո՛րքան անատակ են , Սակայն երկրի վրայ
Հրաշալի զօրութեամբ և ճարտարութեամբ
Թառուած կը նկատուին . — և գիւղեր կան
որ կը պատմեն որ եթէ մէկը Զար Ոգիին
դէմքը տեսնէ , արիւնը կը սառի , — ապրելէ
կը դադրի :

ՀՐԵՇՏԱԿԸ

Աշխարհի վրայ , քու փորձի վիճակիդ մէջ
դուն մօտդ մասնիչ մը (ցանկութիւնը) ու-
նէիր , որ քեզի հետ մէկ էր , որ դժոխքի իշ-
խանութեանց հետ կը դաշնակցէր , որ զգա-
յարանքներուդ բանալիները կը պահէր , և
սիրտդ կը բանար քու ամենաչար թշնամիդ :
Ասոր համար մարդոց աչքին՝ այս ինկած հրեշ-
տակները այնքան անեղ կ'երեւին : Բայց դե-
ւերը շնորհքի զաւակի մը , հրեշտակի կամ
սուրբի , հանդիպելուն պէս կը փախչին ,
կուռելէ կը խուսափին , վատասիրտներու
նման : Շատ ճգնաւորներ իրենց խրճիթին
մէջ զանոնք և անոնց սպառնալիքը ծաղրած
են . կամ , մեռնելու մօտ , երբ անոնք , ճան-
ճերու պէս , իրենց ախուր մահճին շուրջը կը
վխտային , արհամարհած են զանոնք , իրենց
Դատաւորին մօտ երթալէ առաջ :

ԴԵԻՆԵՐԸ

Բարին ու չարն
Միեւնոյն է .
Խաբէրաներն
Լոկ կը պնդեն
Թէ խըտիր կայ
Ասոնց միջեւ :
Ահ , ահ :
Գործել դժոխքին
Եւ թունաւոր
Բոցին վախով
Վատութիւն է :
Իր վարձքը տուր ,
Քանի՞ն ալ
Սուրբ ըլլայ նա ,
Ահ , ահ ,
Վարձքի համար
Պիտի գործէ .
Զինք լաւ դատումն
Հոն պիտի մղէ :
Ահ , ահ :
Սրքայութեան
Կը փախաքի
Դրըղըւած լոկ
Անարգ շահէ ,
Ոչ թէ սէրէ :

ՀՈԳԻՆ

Այս ստապասիր ոգիները չեն տեսներ։ Պիտի տեսնեմ արդեօք իմ ամենասիրելի Տէրս, երբ իր աթոռը հասնիմ։— Կամ, զոնէ, պիտի լսեմ անոր՝ յատուկ չեղտերով իմ վճիռս արտասանելը, ինչպէս այժմ կը լսեմ քու ձայնդ թէեւ քեզ չեն տեսներ։ Երկրէն բաժնուելէս մինչեւ հիմա ամէն բան մութ, աղջամուղջ եղաւ ինծի համար։ Իմ ապաշխարութեանս միջոցին այսպէս տեսութենէ դժուրկ պիտի մնամ։ Եթէ այսպէս է, ինչպէս կ'ըլլայ որ ես տակաւին լսելիքի, ճաշակելիքի և շօշափելիքի զգայարանքները ունիմ։ Բայց չունիմ լոյսը այն գլխաւոր զգայարանքին, որ գաղափարները իրարու կը կապէ և կ'ապրեցնէ։

ՀՐԵՇՏԱԿԸ

Դուն այժմ չունիս ո՛չ շօշափելիք, ո՛չ ճաշակելիք և ոչ ալ լսելիք։— Դուն այժմ կ'ապրիս ավարտներու և նշաններու աշխարհի մը մէջ, որոնք զքեզ չըմբռնող սուրբ, կենդանի և հզօր ճշմարտութիւնները կը ներկայացնեն։

Ո՛վ անմարմնացած հոգի, դուն ինծի հետ միայն խօսելու իրաւունք ունիս։ Բայց որպէս զի այսքան խիստ առանձնութիւն մը չընկճէ և չխորտակէ քու էութիւնդ, քեզի, անձուկ չափով, շնորհուած են ըմբռնումի միջոցներ, որոնք դուն կարծես թէ կու գան ակունջներու, ջլերու, քիմքի պէս ճամբաներէ, որոնցմէ զուրկ ես բոլորովին։ Դուն չըմբռնող ես երազներով — հանելուկային, բայց ճշմարիտ երազներով։ Որովհետեւ առանց այսօրինակ երեւոյթներու, քու ներքին զգայարանքդ չի կրնար ըմբռնել ինչ որ այժմու վիճակիդ կը վերաբերի։

Այսպէս, դուն կը խօսիս միջոցի, ժամանակի և մեծութեան վրայ, — հոստաւորի, հաստատունի, լեզիի կամ ներդաշնակի վրայ, — կրակի և կրակէ յետոյ զովպցման վրայ։ Այս ամէնը այնպէս ճշմարիտ է ինչպէս ճշմարիտ է ըսել թէ՝ սառը կ'ալի, որովհետեւ մորթին վրայ այրուածքի պէս նշաններ առաջ կը բերէ։ (Երկրի բաներէն առնուած բազմաառութիւն մը կը գործածեմ, որպէս զի

քեզի օգնեմ որ փափաքած ծանօթութիւնդ ստանաս)։— Դուն չունիս նաեւ ո՛չ տարածութիւն, ո՛չ անոր առնչական մասերը, ո՛չ քեզ շարժելու կարողութիւն, ոչ ալ շարժելու անդամներ։ Երկարժամանակեայ ունակութիւններ քեզ կը խաբեն։ Լսած չեմ բնաւ ինչ որ կը խօսուի անոնց մասին սրտնք ձեռք մը, կամ ոտք մը կորոնցնելէ յետոյ, կ'ըսեն թէ տակաւին կը ցաւի իրենց նոյն ոտքը կամ նոյն ձեռքը, որպէս թէ միշտ ունենային զայն։ Այսպէս է նաեւ քեզի համար, որ կորսնցուցած ես ոչ թէ միայն մէկ ձեռքդ կամ ոտքդ, այլ այն ամէնը որով կազմուած էիր իրրեւ մարդ։ Եւ այսպէս պիտի ըլլայ մինչեւ յարութեան ցնծալի օրը, երբ վերանորոգուած և փառաւորուած, դա՛րձեալ պիտի ստանաս կորուսածներդ։

Թէ ինչպէս, այժմէն, երկինքի մէջ կատարեալ սուրբերը Աստուած կը տեսնեն չեն կրնար քեզի բացատրել։ Առ այժմ, քեզի շնորհուած խօսակցութեան միջոցները ունենալդ բաւական թող ըլլայ, թէեւ մինչեւ այն Երանական Տեսութեան օրը, կոյր մնաս։ Որովհետեւ նոյն իսկ քաւարանդ որ կրակի պէս է, անլոյս կրակ մը պիտի ըլլայ։

ՀՈԳԻՆ

Իր կամքը թող ըլլայ։ Արժանի չեմ ո՛չ լոյսը նորէն տեսնելու, և ոչ, մանաւանդ, նկատելու իր դէմքը որ նոյն ինքն արեւն է։ Սակայն երկրի վրայ, երբ կանխաւ կը դիտէի քաւարանս, կը մխիթարուէի՝ համարելով որ վրէժխնդիր բոցերուն մէջ միւրրճելէ առաջ Անոր մէկ տեսութիւնը ինծի պիտի շնորհուի, զիս զօրացնելու համար։

ՀՐԵՇՏԱԿԸ

Այդ նախազգացումը ոչ ընդունայն եղաւ եւ ոչ ալ յանդգնական։ Սապէս պիտի ըլլայ։ Երբ կոչուիս անեղ ատենանք և դատաւճիող տրուելու վրայ ըլլայ, տեսութիւնը, կամ ինչ որ հոգւոյն համար տեսութիւն պիտի ըլլայ, փայլակի պէս պիտի երեւի քեզի և պիտի տեսնես խոր մթութեան մէջ, բոպէ մը, հոգւոյդ Սիրականը։ Բայց չես գիտեր, զա՛ւակս, ինչ որ կը խնդրես։ Տեսութիւնը Անոր, որ

նոյն ինքն Գեղեցկութիւն է, քեզ պիտի ուրախացնէ, բայց պիտի խոցէ ալ:

ՀՈԳԻՆ

Առեղծուածով կը խօսիս, հրե՛շտակ, Ահ ու դող մը կը բռնէ զիս, կը վախնամ մի գուցէ յանդգնութիւն ընեմ:

ՀՐԵՇՏԱԿԸ

Մահկանացու՛ մը կար, որ այժմ արքայութիւնը կէս-փառքի մէջ է: Անիկայ երբ մեռնելու վրայ էր, ինչեալին հետ հաղորդակցութեան մանկու շնորհքին արժանացաւ, այնպէս որ Տիրոջ խոցերն իսկ իր մարմնոյն վրայ դրոշմուեցան: Տագնապէն, որ, այս գրկախառնումին մէջ, հոգին ու մարմին միանգամայն սարսուռացուց, հասկչի՛ր թէ Յաւիտենական Սիրոյ բոցը այլակերպելէ առաջ կը սողառէ:

Թարգմանեց ԱՐՁԱՆ

(Շարոյ Բակիկի)

¹ Հաւանականօրէն Ս. Ֆրանչիսկոս Աստիզացիին վրայ է խօսքը:

ՏԵՂԵԿԱԳՐԱԿԱՆ

ՀՈՌՄ ԵՒ ԿԱԹՈՂԻԿԷ ԱՇԽԱՐՀ. — Ապրիլ 5ին Ս. Բահանայապետը ունկնդրութիւն մը տուաւ Ամերիկայի Ուշոյց թերթին թղթակից Մ. Բուրթ ֆոն Վիկանտի: Ունկնդրութեան միջոցին Ս. Պապը հետեւեալը յայտարարեց ամերիկացի օրագրողին.

«Ողջոյններս եւ օրհնութիւններս կ'ուղղեմ ամերիկեան ժողովուրդին: Այդ արջիւ ժողովուրդին հաղորդեցէք միակ մաղթանքս՝ այսինքն թէ անխնջ ու մարդասիրութեամբ աշխատի խաղաղութեան վերահաստատմանը համար, որպէս զի այս ահարկու արիւնհեղութիւնը, իր բոլոր արհաւիրքներովը չուրով վերջ գտնէ: Այսպէս մեծ ծառայութիւն մը մատուցած պիտի ըլլաք Աստուծոյ եւ ամբողջ մարդկութեան եւ ձեր գործին յիշատակը անջնջելի պիտի մնայ: Եթէ ձեր երկիրը խոյս տայ հարիւր հազարներով զոհեր տուող այս սոսկալի կոտորումը երկարելու նպատակով ամէն բանէ, այն տառն Ամերիկա, իր զօ-

րութեանն ու ազդեցութեանը չնորհիւ, պիտի կրնայ մասնաւոր կերպով փութացնել այս զարհուրելի պատերազմին վախճանը:»

Մ. Վիկանտ կը յարէ թէ այս է զատկական պատգամը զոր Ս. Պապը իրեն հաղորդած է ամերիկեան ժողովուրդին համար, յիշատակելի այս ունկնդրութեան, այս առաջին տեսակցութեան մէջ, զոր Ն. Սրբութիւնը ամերիկեան օրագրողի մը տուաւ Հեռն ժ. Բ. մահէն ի վեր: Ս. Պապը յարեց. — «Առանց յփնդելու եւ միաբերան աղօթեցէք եւ աշխատեցէք խաղաղութեան համար: Այս է զատկական մաղթանքս. եւ ամենօրեայ աղօթքս: Բոլոր ջանքերուս նպատակն է խաղաղութեան վերահաստատումը: Մօտալուտ խաղաղութեան մը մասին բոլոր յոյսս դրած եմ ամերիկեան ժողովուրդին եւ ամբողջ աշխարհի մէջ անոր ունեցած ազդեցութեանն ու զօրութեանը վրայ: Ամերիկա, որ միշտ արդար է ու անկողմնակալ, Ամերիկա որ միշտ չէզոք եղած է իր բոլոր ճիգերուն մէջ, անշուշտ Վատիկանի ամենէն եռանդուն աջակցութիւնը պիտի գտնէ երբ յարմար վայրկեանը ներկայանայ հաշտութեան բանակցութիւնները սկսելու համար: Այս պարագան ձեռնախաղանին հաղորդել տուի իր ամենէն մտերիմ բարեկամներուն միջոցաւ» (Կ. Գ.)

— Բաղաքային գերիներու իրենց երկիրները դառնալու մասին Ս. Բահանայապետին կողմէ պատերազմիկներուն մօտ կատարուած դիմումն եւս ընդունելութիւն գտած եւ յաջողութեամբ պսակուած է: Այս ինդիքին նկատմամբ Գերմանիոյ եւ Անգղիոյ միջեւ ծագած անհամաձայնութիւնը Ն. Սրբութեան ջանքերով վերջ գտած է: Այս բանին համար անդղիական կառավարութիւնը իր Հռոմի լիազօր պաշտօնէին միջոցաւ շնորհակալութիւն յայտնած է Ն. Սրբութեան:

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՊԱՏՐԻԱՐԿԱՐԱՆ. —

Այս տարի զատկական տօները արտաքոյ կարգի շքեղութեամբ կատարուեցան Աւագ Թեմին եկեղեցիներուն մէջ, ժողովուրդը ցոյց տուաւ իր անսասան բարեպաշտութիւնը Ս. Խորհուրդներուն մերձենալով եւ եկե-

ղեցական արարողութեանց ներկայ դանու-
լով այնքան հոծ բազմութեամբ որ երբեմն
եկեղեցիները փոքր կու գային :

Աւագ Հինգշաբթի օրը, Ս. Աստուածա-
ծին Աթոռանիստ եկեղեցւոյն մէջ պատարա-
գեց և Սուրբ Իւղերը օրհնեց՝ Ամենապատիւ
Հոգեւոր Տէրը, Նոյն օրհնութեան, հայրա-
պետական զգեստներով մասնակցեցան Արհի,
Արհի. Տեղապահ Օգոստինոս Արքեպիսկոպոս
Սայեղեան, Մատթէոս եպիսկոպոս Սիսիան,
և Տրապիզոնի վիճակաւոր Յովհ. եպիսկոպոս
Նազլեան :

Ն. Ամենապատուութիւնը հոյն Աթոռա-
նիստ եկեղեցւոյն մէջ հանդիսաւոր եղաւ Ա-
ւագ Հինգշաբթի Ոտնլուային, Աւագ Ուր-
բաթի գիշերային և առաւօտեան ժամերգու-
թեանց որ նախընթաց իրիկուընէ սկսան, և
Աւագ Շաբաթ օրուան և Զատիկի արարողու-
թեանց : Զատիկին, Ն. Գերերջանկութիւնը
հանդիսաւոր պատուով մատուց. պատարա-
գէն յետոյ ստուար թափօրով Կաթողիկոսա-
րանի սրահը ելաւ, ուր կատարեց սնորհնէ-
քը և ապա ընդունեցաւ Ս. Յարութեան
շնորհաւորութիւնները :

— Զատիկին երկրորդ օրը Ն. Գերերջան-
կութիւնը հայրապետական Զայնաւոր մատուց
Ս. Փրկիչ Մայր եկեղեցւոյն մէջ և ապա հան-
դիսադիր եղաւ, ըստ վաղեմի սովորութեան
ի պատիւ Աստուածածնայ ամէն տարի հոն
տեղի ունեցող շքեղ արարողութեան և թա-
փօրին : Հակառակ օդին գէշութեան, ան-
նկարագրելի էր հաւատացելոց խումն բազ-
մութիւնը և խանդավառ ջերմեռանդութիւ-
նը : Ներկայ էին նաեւ Արհի. Յ. Արք. Ռո-
քոսեան Կ. Պ. Փոխանորդը, Սայեղեան, Սիս-
լեան և Նազլեան Գերապայծառները : Հա-
ւատամբէն առաջ Արհի. Յովհ. եպիսկ. Նազ-
լեան շատ գեղեցիկ ներբող մը խօսեցաւ Ս.
Աստուածածնայ վրայ :

— Ապրիլ 9ին, 10ին և 11ին Ս. Ա. Ա-
թոռանիստ եկեղեցւոյն մէջ Բառասուռն-ժա-
մերու ջերմեռանդութիւնը կատարուեցաւ :
Վերջին օրը առաւօտուն տեղի ունեցաւ Ա-
ռաջին Հաղորդութեան սրտաշարժ հանգէսը :
Եկեղեցւոյ աջ կողմը զբաւած էին Անարատ

Յղ. Կարպին Բոլրերը, իրենց 300է աւելի
հին եւ նոր աշակերտութիւններով եւ առաջին
Հաղորդութեան պատրաստուած ողիտակա-
զգեստ սանուհիներով՝ ձախ կողմը զբաւած
էին Վենետիկի Մխիթարեանց Բերայի վար-
ժարանին եւ Ս. Յ. Ոսկերեան եկեղեցւոյ
դպրոցին աշակերտները : Ժողովրդէնէն շա-
տերը տախտեցան եկեղեցւոյ բակը կենա-
լու, ո'չնչտի հոծ էր բազմութիւնը : Պատա-
րագեց Ամեն, Հոգեւոր Տէրը : Հաւատամբէն
առաջ Ն. Գերերջանկութիւնը հաւատքով ու
սիրով գեղուն խօսքերով պատրաստեց զա-
մէնքը Ս. Հաղորդութիւնը ջերմեռանդու-
թեամբ ընդունելու : Նոյն օրը հաղորդուող-
ներուն թիւը 500ը անցաւ : Մեծ կարգապա-
հութեամբ տեղի ունեցաւ այսքան բազմու-
թեան հաղորդութիւնը եւ արտօսուելու չափ
յուզեց շատերը :

— Շնորհակալութեան աղօթքէն յետոյ
այլեւայլ դպրոցներու ուսանողները իրենց
դաստիարակներուն առաջնորդութեամբ Կա-
թողիկոսարանի սրահը ելլելով, Ամեն. Հո-
գեւոր Տիրոջ սուրբ աջը համբուրեցին : Ն.
Գերերջանկութիւնը յուզեալ սրտով օրհնեց
զամէնքը եւ մէյմէկ յիշատակ տուաւ :

— Նոյն օրը առաջին հաղորդութիւն առ-
նող աղաք Վարդարանի եւ Հանդերձի եղ-
բայութեանց գրուեցան :

— Նոր Կիրակիի իրիկունը, ժամերգու-
թեանէն եւ պերճիմաստ քարոզէն յետոյ, գոր
խօսեցաւ Արհի. Յովհ. եպ. Նազլեան, Ս.
Հաղորդութիւնը թափօրի հանդէս Ն. Ամենա-
պատուութիւնը եւ ապա օրհնութեամբ փա-
կեց Բառասուռն-ժամերու ջերմեռանդութիւնը :
Այն իրիկուան հանդէսը բուռական տարիներէ
ի վեր չաւանդած շքով կատարուեցաւ : Ժո-
ղովրդը խոնուած էր ո'չ միայն եկեղեց-
ւոյն ներսը այլ նաեւ դրսի բակը եւ շուրջի
սրահները : Թափօրը եկեղեցւոյ կողմնակի
ձախ դռնէն մեկնեցաւ եւ վարդապետանոցի
սրահէն անցնելով փողոց ելաւ եւ եկեղեցւոյ
աւագ դռնէն ներս մտաւ : Անթիւ անհամար
բազմութիւն մը կը մասնակցէր թափօրին :
Առջեւէն կ'երթային Ա. Յ. Կարպի Բոլրերը
եւ անոնց սպիտակազգեստ աշակերտուհի-

ներք՝ իրենց զրօշներով: Յետոյ կու գային զպրոցական ուսանողներ, ապա չափկազգեստ զպիրներ, շուրջառակիր վարդապետներ, հայ-բապետական զգեստով արքեպիսկոպոսներ եւ եպիսկոպոսներ: Այս ամէնուն կը հետեւէր Ամեն. Հոգեւոր Տէրը՝ Ս. Հաղորդութեան ճաճանչը բռնած, շուրջն ունենալով իր ընթերակները, կերոնակիրները, ամպհովանին բռնողները, երկու թուրվառակիր որ խուռնկ կը ծխէին, եւ չորս փոքր աղջիկներ որ Ս. Հաղորդութեան առջեւ ծաղիկներ կը սրփոէին: Փողովրդեան բազմութիւնը որ բաւական տարիներէ ի վեր զուրկ մնացած էր այս հանդէսէն, թափօրին կը հետեւէր մեծ յուզումով եւ ուրախութեան արտայայտութիւններով:

* * Մարտ 21ին Մարգուսնի. Սամուհի եւ Ամասիոյ մէջ Ս. Քահանայապետին կողմէ աշխարհի խաղաղութեան համար որոշուած ազօթքները մեծ հանդիսութեամբ կատարուած են: Նոյն առթիւ կատարուած են նաեւ տարեկան հոգեւոր կրթութիւնները, որոնց ներկայ դասուած է ժողովուրդը խուռն բազմութեամբ եւ մեծ ջերմասնուցութեամբ:

ՆԵՐՔԻՆ ԵՒ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳՈՐԾԵՐ. — Այս տասնուհինգ օրուան մէջ ռազմադաշտերու վրայ նշանակութեան արժանի կարեւոր զէպքեր տեղի չունեցան:

Տարտանէյի մէջ առ հոտարակ հանդարտութիւն կը տիրէ: Ապրիլ 13ին թշնամին կէս ժամի չափ ուժգնութեց առանց ազդեցութեան:

Քարբաթներու մէջ աւատրիական գերմա-

նական միացեալ բանակներու եւ ռուսերու միջեւ ռոտկալի ընդհարումներ տեղի կ'ունենան:

* * Օսմ. ընդհ. բանակեղէն կը զեւկուցուի Ապրիլ 4 թիւով. — Երբ մեր նաւատորմը երէկ Օսեսայի ծովածոցին չրջակայքը կը յաճէր, 2020 թնոնոց Բրովիսկնդ եւ 1520 թնոնոց Վոսթոկնախա Զվէչսա անուն ռուսական երկու մեծ շոգենաւեր մեր նաւատորմին կողմէ ընկղմուեցան իրենց բեռովը միասին եւ նաւազները գերի բռնուեցան: Այս գործողութեան միջոցին մեր Մեծիսիէ փոքր յաճանաւը, որ Օչաքովի ամրոցին չրջակայքը, թշնամի ականահաւաք նաւեր կը հետամնչէր եւ զէպի թշնամի ծովեղբերը կը յառաջանար, ականի մը հանդիպելով ընկղմեցաւ:

Մեծիսիէ յաճանաւին նաւազները ազատուեցան չրջակայքը գտնուող օսմ. մարտանաւերուն կողմէ:

Պերլին, Ապրիլ 13. — Լոնտոնէն կը հեռագրուի. — Թայնզ իր խմբագրականին մէջ խօսելով ճակատամարտի զաշտերուն վրայ պատահած զէպքերու մասին, կ'ըսէ. «Քար-նանային պատերազմը արեւմտեան ռազմադաշտին վրայ, զեռ նոր սկսաւ, բայց յուսահատական կռիւները որ կը մղուին արեւելիան ճակատին իրայ՝ ձեռք ձգելու համար Քարբաթի գագաթները, չեն կրնար նկատուիլ յառաջտարանական գործողութիւններ: Այս կռիւները ամենամեծ կարեւորութիւն ունին, որովհետեւ անոնցմէ կախում ունի պատերազմին ելքը արեւելեան ռազմադաշտին վրայ: (Կ. Գ.)

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Դեպքեր եւ սկզբունքներ	97	Ալլելայի	105
Հովուական քուրթ	100	Գերոնիսիայի երազը	107
Խմաստութեան սկզբանց վրայ խորհրդածութ.	102	Տեղեկագրական	110
Փարմասունքիւնք	103		

ԱՐՏՕՆԱՏԷՐ

ՅՈՎԼ. Մ. Վ. ԿԵՏԻԿԵԱՆ



ՏՆՕՐԷՆ-ԽՍՐԱԳՐԱԳԵՏ

ԳԷՈՐԳ Մ. Վ. ԹԵՐԶԻՊԱՇԵԱՆ

Տպարան Կ. Արմազանց Հասարակական, Բերա, Պայրամ փողոց քիւ. Կ. Պոլիս

ԲՍԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ.— Թուրքիոյ համար տարեկան՝ 40 դհկ. արծ. վեցամսեայ՝ 20.— մէկ թիւ՝ 1 դհկ.— Արսասան վան՝ տար. 3ր. 10. վեցամս. 5.— Վճարմունք կանխիկ են:

ՀԱՍՑԷ.— Կաթողիկէ Արձագանգ, Բերա, 5. Պայրամ փողոց 5, Գոյիս:

GATOGHIGUÉ ARTZAKANK

Péra, 5 Rue Baïram 5

Constantinople

ԾԱՆՈԹՈՒԹԻՒՆ.— 1.— Արձագանգ կը հրատարակուի Շաբաթ օրերը: 2.— Խմբագրութիւնս պարտաւորեալ չէ անպատճառ կամ նոյնութեամբ հրատարակել իրեն զրկուած ու եւ յօդուած: 3.— Կեղծանունով զրկուած յօդուածներու հեղինակը կը պարտի իր իսկական անունը ծանուցանել Խմբագրապետին: 4.— Ձեռագիրները ետ չեն դարձուիր: 5.— Յօդուածներու ձեռագիրները պէտք է գրուած ըլլան թուղթին մէկ կողմը միայն: 6.— Ծանուցմանց համար մասնաւոր պայմանագրութիւնք կը կատարուին: 7.— Հասցէի փոփոխութեան համար պէտք է անհրաժեշտ երկու դահեկանի նամակագրոյժ ի միասին զրկել:

Տարր. Սկզբունք Քրիստ. Վարդապետութեան. գին 2 դհկն.:

Տէր Կոմիտաս Քահանային վարքը. գին 5 դհկն.:

Եսթեր՝ ողբերգութիւն Ռասինի. Գին 3 դահեկան:

ՏՊԱՐՍՆ Կաթողիկէ Արձագանգի Բերա, 5 Պայրամ փ. 5: Տպարանս ըստ ամենայնի ճոխ և ի վիճակի է: Եւ իսկ տպագրական գործոց համար կը տպուին ամեն տեսակ ծանուցմունք, գիրքեր, տետրներ, հրաւիրագիրներ, քարտեր, քարդ-ատրէճներ, մահազդներ, եւն. Գրիները անմեղքի կերպով աման են: Գեղեցկադիտական ճաշակ և տպագրական մաքրութեան կողմէ յաճախորդները անտարակոյս գոհ պիտի մնան:

WIENER BANK-VEREIN

FONDÉ EN 1869

Capital entièrement versé 150.000.000 de couronnes

Réserves: 49.000.000

SIÈGE CENTRAL:

VIENNE I. Schottenring

SUCCURSALES:

EN AUTRICHE-HONGRIE: *Agram, Aussig, Bielitz-Biala, Bozen, Bruenn, Budapest, Budweis, Czernowitz, Drohobycz, Friedek-Mistek, Graz, Innsbruck, Jaegerndorf, Karlsbad, Klagenfurt, Krakau, Lemberg, Marienbad, Meran, Oest, Nowosielitza, Pardubitz, Pilsen, Prag, Prossnitz, Przemyśl, Salsburg, St. Poelten, Stanislau, Tarnopol, Tarnow, Teplitz, Teschen, Villach, Wr. Neustadt, Zwittau:*

EN TURQUIE:

Constantinople et Smyrne.

SUCCURSALE DE CONSTANTINOPLE

*Siège à Galata, Place du Pont de Karakeuy
Agences à Stamboul, Péra et Scatari.*

Le Wiener Bank-Werein fait toutes opérations de Banque et notamment:

Avances en Compte-Courant contre dépôt des titres, effets de commerce ou marchandises;

Escompte d'effets de commerce;

Achat et vente de change sur l'Etranger;

Emission de lettres de crédit et ouverture d'accreditifs simples et documentaires;

Paiements télégraphiques en Turquie et à l'Etranger;

Encaissement d'effets, de coupons, d'obligations amorties ou favorisées aux tirages;

Exécution d'ordres de Bourse sur place et à l'Etranger;

Ouverture de Comptes-Chèques et de comptes-dépôts à intérêt;

Garde de titres, marchandises etc.

Achat et vente de monnaies diverses, matières précieuses, monnaies d'ornements;

Caisse d'Epargne à 3. $\frac{1}{2}$ % d'intérêt.

Location de coffre-fort (à Galata et à Stamboul).

UN BUREAU DE VOYAGE (Représentant des Chemins de fer de l'Etat Autrichien) est attaché à l'Agence de Péra et délivre des billets pour tout l'Univers. Les voyageurs y trouveront toutes facilités possibles et tous renseignements désirés.